Հ Ր Ա Մ Ա Ն

08 հուլիսի 2022թ. Թիվ 298-Լ
ք. Երևան

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. հուլիսի 11-ից Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 26-րդ կետով սահմանված՝ անկանխիկ մուտքից գումարի կանխիկ տրամադրման համար սակագինը այսուհետ փոփոխել հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով՝ 0.3%, նվազագույնը 200 ՀՀ դրամ,
- ԱՄՆ դոլարով, եվրոյով, բրիտանական ֆունտով և շվեյցարական ֆրանկով՝ 3%, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
- ՌԴ ռուբլով՝ 0%:

2. Սույն հրամանի 1-ին կետով նշված սակագինը կիրառել նաև յուրաքանչյուր արտարժույթով վարկի կանխիկացման դեպքում՝ անկախ վարկի գումարի չափից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել ս.թ. մայիսի 27-ին ԳԳՏ կողմից տրված թիվ 225-Լ հրամանը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2022.07.08 17:52:19 +04'00' Հակոբ Անդրեասյան